ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի դուրսգրման փաստաթղթերը հաստատելու որոշման նախագծի

- Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական պահանջները, Սիսիան համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 037-Ա կարգադրությունը և աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի փետրվարի 21-ի թիվ 047-Ա հրամանը, կազմվել է Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի դուրսգրման հանձնաժողով, որն իր իրավասության շրջանակներում կազմակերպել է համայնքային սեփականության գույքի դուրսգրման աշխատանքները:
- Կազմվել են գույքի դուրսգրման ակտեր, որոնք հաստատվել են ստեղծված հանձնաժողովի կողմից, համակարգչային տեխնիկայի համար տրվել է մասնագետի եզրակացություն, ինչպես նաև հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն ակտերում ներառված գույքի դուրսգրման համար:
- Որոշման նպատակն է համայնքային սեփականության գույքի արդյունավետ կառավարումը, պահպանումը և օգտակար ծառայության իրականացումը:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

12/09/2024թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման նախագծի ընդունումից հետո բյուջեի եկամտային և ծախսային մասում փոփոխություն չի նախատեսվում :

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

12/09/2024թ